

Գրքին մաս մը, 100 էջէ աւելի, կը պարու- նակէ կենսագրականներ. Ժ. Ե. դարու գէմքերէն մինչեւ Ամերիկայ գաղթող Տիգրանիկերոսի աշ- քառու գէմքերուն: Այդ աշքառու գէմքերու կարգէն չեմ նկատեր վերջինը՝ որ կամաւոր կ'երթայ ու կ'ընայ օտար ազգերու միջեւ մղուած կռիւին մէջ: Ինչ տիտղոսով ալ ըլլայ, հոն ուր գէթ հեռաւոր կերպով չունինք ազ- գային շահ մը, մենք թափելիք աւելորդ արիւն չունինք: Տիգրանական գաղափարապաշտութիւնը չէ՞ ծանրացած մեր մատի համարնք ունեցող ազգի ջուսերուն. մինչ ուրիշներ, տասնապատիկ աւելի համարնք ունեցող ազգեր, գաղափարա- կանը կը գործածեն մի միայն իբր խաբուսիկ բանաձեւ մը, ապահովելու համար իրենց նիւ- թական շահերը:

Հետաքրքրական են Ամուսնուրիւն և յաջորդ գլուխները, ուր Տիգրանականները կը ներ- կայացուի իր սովորութիւններով և իր բնական հակումներով: Այճէկը կամ Տիգրանիկի վի- յայթը գլուխը նկարագրական մ'է ընդարձակ և մանրամասն, ճոխացած լուսանկարներով և քարտէսներով: Հեղինակին անձնական յուշերը կը փակեն Ամիտայի Արձագանդները:

Գիրքը բնականաբար չէ գրական արտադրու- թիւն մը, թէպէտ յարմար դատուած տեղեր ազդեցութեամբ են ակնարկուած անձի մը հեղինա- կած կամ գէպքի մը առթիւ գրուած բանա- ստեղծութիւնը. այլ հաւաքածոյ մըն է՝ որուն մէջ հասցեւոր քիչ մը կը զգացնէ իր մասը՝ հետաքրքրական, ճոխացած աշխարհագրական քարտէսներով և տեղերու և անձերու լուսա- նկարներով: Ճոխ և մաքուր տպագրութիւն մը, ուր հեղինակը տարուած է իր երկին նկարա- գիրը արդարացիելու ջանքով. առջեւի մասն ալ որ գրական կարելի է կոչել, Ամիտայի մէկ կամ միւս պատկերը ցուցադրելու նպատակով՝ չափազանց մեծ շեղումներ կ'ընէ, մոռցնել տալու աստիճան պատմութեան նիւթը և կամ հերոսը: Այսպէս Սիրոյ արտասուքը գլխուն մէջ երկար մաս մը Ամիտայի մէջ կարիճներու ա- ոտութեան, անոնց խայթուածքին դէմ տե- ղացինքու գործածած միջոցներուն, կարիճ- ներու և օձերու դէմ արտասանուած մոգական աղօթքներուն, կարիճներու ներքին կեանքին եւն: Նմանապէս Այլապատեցող հացագործը գլու- խին ներքեւ կը խօսուի Տիգրանիկերոսի իրօք նախանձելի ձմերուկներու և արագիւններու վրայ:

Նման շեղումներ էմին պէկի նուիրուած գլխուն մէջ: Շատ իմաստալից են էմին պէկի դատա- տանները. կարծես այս անձը աւելի ժողովրդէն ստեղծուած տիպար մ'ըլլալ կը թուի քան իրա- կան անձնաւորութիւն մը. իր անունին վերա- գրուած պատմութիւնները տարբեր տեղեր ուղիւ անուաններով ալ պատմուած են:

Սակայն այս գրքին պէտք է նայիլ իր տեսակե- տովը միայն. անիկա Արձագանդ և Ալիտայի հետուէն մօտէն նա կը կրկնէ, կը կենդանացնէ արդէն մարած եղելութիւններ. և այս տեսակե- տէն նա իր գիրքին վրայ է: Ընթերցումը հա- ճելի է. հեղինակին հետ ակնադասութիւն կ'ըլլաւ գիւղական կեանքի մը մանրամասնութիւննե- րուն. նահապետական կեանք մը ուր ամէնքը «... առանց հասկացողութեան բայց բնագոյ- մով իրարու օգնող և նեցուկ են»: Բոլոր գիւղը «... ոչ թէ գիւղական հասարակութեան, այլ մէկ յարկի տակ մեծցող բազմազամ ընտանիքի մ'ազդեցութիւնը պիտի ընէր»:

Եւ այդ հասարակութիւնը այսօր ճշգրիտորէն քանցուած, ցրուած է երկրիս բոլոր կողմերը. այլեւս օրական հրատապ հարցերուն մէջ ալի- կոծ, կը զգայ ծարաւը և կարօտը երբեմնի ծննդավայրին արձագանդներուն:

Պր. Տիգրան Մկուրի գրիչով Ամիտայիները կ'ունենան իրենց հայրենիքի պատմական հետա- պատկերը: Այս գիրքը հրաւեր մըն է անոնց որ տեսեր ու ապրեր են, նոյն գոհողութիւններով կենդանացնելու իրենց ծննդավայրի պատմա- կանը:

Հ. Յ. Զ.

ԱՐՇԱԿ ԱԼՊՈՅԱՃԵԱՆԻ «ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՅ ՅԱՍՏԱՆԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ» տպ. Գահիրէ, 1950:

Պ. Արշակ Ալպոյանեան իր հեղինակած գոր- ծերու շարքին՝ վերջերս դեռ աւելի թանկագին երկ մը աւելցուց «Պատմական Հայաստանի սահմանները» խորագրով:

Այս գործը մեծ պակաս մը կը լրացնէ Հայաս- տանի պատմական աշխարհագրութեան, որուն պէտքը շատ զգալի էր:

Յարգելի հեղինակը գիրքը նուիրած է իր կնոջ Աննիկ Ս. Ալպոյանեանի յիշատակին՝ որ վախ- ճանած է Գահիրէի մէջ 1941-ին:

Այս կարեւոր գործը մեծագիր գիրքով՝ կը բաղկանայ յառաջաբանէ, և 479 էջերէ:

Յառաջաբանին մէջ Պ. Ալպոյանեան կը գրէ, թէ երբ 1941-ին հրատարակեց «Պատմութիւն Հայ գաղթականութեան» գիրքը, ոմանք գրաւոր, և բերանացի, իբր կարեւոր պակաս մը, մատնա- նիշ ըրին թէ չէին ճշգրտած Հայաստանի սահման- ները, գիտնալու համար թէ ուր էր Հայ ազգին բուն հայրենիքը, և թէ ուր սահմաններէն անդին Հայերը պէտք է նկատուէին գաղթականներ:

Ու ահա Պ. Ալպոյանեան ընդունելով այն դիտողութեան ոչ անարժէք ըլլալը, ճշգրտու հա- մար Հայաստանի սահմանները, ու ցոյց տալու համար Մայր Հայրենիքի ու գաղթականութիւն- ներուն միջեւ եղած տարբերութիւնը՝ ձեռնարկած է այդ դժուարին՝ բայց արդիւնաւատ աշխատու- թեան:

Այս կարեւոր ձեռնարկը աւարտելէ վերջ, հեղի- նակը գաղափարներու զուգակցութեամբ ծրա- գիրն ունեցած է Հայաստանի ներքին սահման- ներով ալ զբաղիլ, ինչ որ նուազ կինոստ հարց մը չէր, որովհետեւ Հայաստան այնպիսի հո- ղամաս մըն էր որուն մէջ կազմուած հայ և օտար իշխանութիւնները բնաւ տեւականութիւն և հաստատութիւն չէին ունեցած, և իրենց սահ- մանները շարունակ փոփոխութեան ենթա- կուած էին:

Որով գիրքը բաժնուած է երկու մասերու. ա- ռաջին մասը կը խօսի Հայաստանի արտաքին սահմաններուն, իսկ երկրորդ մասը Հայաստանի ներքին սահմաններուն վրայ:

Այս գործը նորութիւն մ'ըլլալով հանդերձ իբր գաղափար ու իբր իրականացում՝ Պ. Ալ- ղակ Ալպոյանեան իրեն յատուկ համեստու- թեամբ յաւակնութիւն չէ ունեցած սակայն կատարեալ գործ մը երեւան հանած ըլլալ, որովհետեւ, ինչպէս ինքը կ'ըսէ, հետո մեծ կեդրոններէ ու մատենադարաններէ՝ ձեռքի տակ չէ ունեցած լայն միջոցներ, ու ամէն աղբիւր պրպտելու հնարաւոր պատեհութիւն. հետեւա- բար դարձեալ նոյն համեստութեամբ ընթեր- ցողին ներողամտութիւնը կը խնդրէ, եթէ երբեք թերութիւններ ու վրէպներ ըլլան այդ գործին մէջ, որոնք անխուսափելիօրէն պէտք է, կ'ըսէ, պատահած ըլլան:

Պ. Ալպոյանեան նոյն համեստութեամբ կը գրէ. «Ես հիմ ու խաբիսի մը ստեղծել աշխա- տեցայ, աւելի կարողներու թողլով յառաջի- կային աւելի մանրակրկիտ ուսումնասիրութիւն- ներ կատարել, և սրբագրել իմ թերիւններս ու

լրացնել պակասութիւններս... այսպիսի գոր- ծերու մէջ անթերիին ձգտիլ՝ անկարելին հե- տապնդել է, ուստի ըրի ես ինչ որ կարելի էր ինծի համար, թողլով ուրիշներուն զայն լրա- ցնելու գործը»:

Յարգելի հեղինակը այդ գրքին պատրաս- տութեան տեսն, Հայոց պատմութեան բոլոր սովորական դասագրքերու մէջ գրուած և ամէ- նուն յայտնի անցքերու և իրողութիւններու վրայ ծանրացած չէ: Ընդհակառակն ծանրացած է Հայաստանի մէջ տեղի ունեցած այն դէպքե- լուն վրայ՝ որոնք մեր պատմութեան մէջ չեն անցած, ինչպէս մեր հողին վրայ հայ և օտար այն իշխանութիւններու և տիրապետութիւն- ներու վրայ, որոնց յիշատակութիւնը շատ ան- ցողակի և դիպուածաբար յիշատակուած է մեր պատմութեան մէջ, ներկայացնելով զանազ պատմութեան առանձին իշխանութիւններ, ու- իբր առանձին առանձին իշխանութիւններ, ու- թուագծելով միանգամայն անոնց պատմութիւնը համառօտ կերպով:

Պ. Ալպոյանեան մասնաւոր ուշադրութիւն ընծայած է Հայաստանի հողին վրայ ապրող մեծ ու փոքր թագաւորութիւններուն ու իշխա- մեծ ու փոքր թագաւորութիւններուն ու իշխա- նութիւններուն, ինչպէս նաեւ մեր երկրին մէջ նութիւններուն, իշխանութիւններուն, կազմուած մահմետական իշխանութիւններուն, իրենց վրայ ընդարձակօրէն խօսելով իբր Հայ անոնց վրայ ընդարձակութեան մէկ էջ, որ պէտք ժողովրդի պատմութեան մեծ չէր մինչեւ հիմա: Եղածին չափ նկատի առնուած չէր մինչեւ հիմա:

Հեղինակը կը գրէ յառաջաբանին մէջ՝ թէ յառաջակային պիտի գտնուին ուրիշներ որ յա- յատալակային պիտի գտնուին առարկայ ընեն կարգ տուկ ուսումնասիրութեան առարկայ ընեն կարգ տու չայ և իսլամ պետութիւններու պատմու- թիւնը մասնաւոր հատորներով:

Պատմական Հայաստանի սահմաններու գիրքը մեծ ծառայութիւն պիտի մատուցանէ ու առաջը պիտի հայթայթէ անոնց՝ որոնք զանազան դա- րերու մէջ Հայաստանի աշխարհագրական ու քաղաքական միջավայրն աչքի առջեւ ունենալ կ'ուզեն, կամ անոնց վրայ ուսումնասիրութիւն- ներ կատարել:

Շնորհաւորելի է Պ. Ալպոյանեանը այս գիր- քին համար, ու մաղթելու է որ ոչ միայն իր մտադրած Հայ նախարարութիւններու ու Հայ Եկեղեցիներուն պատմութիւնը ուսումնասիրէ Եպիսկոպոսներուն պատմութիւնը ուսումնասիրէ ու հրատարակէ, այլ նաեւ դեռ աւելի թանկա- ցին ուսումնասիրութիւններ կատարէ ճոխացնե- լով հայ բանասիրութիւնը:

Հ. ՅՈՎՀԱՆՆԵՍ ԱՏԷՄԵԱՆ